

**Վիճակագրական արտադրանք – Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս  
(ամսական)**

Գործընթացներ	Ենթագործընթացներ	Ենթագործընթացի նկարագրություն
1. <i>Կարիքների ձևակերպում</i>		
	1.1 Կարիքների բացահայտում	<p>Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսի (ԱԱԳԻ) հաշվարկման անհրաժեշտությունը պայմանավորված է արդյունաբերության ոլորտի կազմակերպությունների թողարկած արտադրանքի գների մակարդակի փոփոխության վիճակագրական դիտարկման ապահովմամբ, հաշվարկված վիճակագրական ցուցանիշների նկատմամբ ինչպես Արմստատի վիճակագրություն վարող կառուցվածքային ստորաբաժանումների, այնպես էլ վիճակագրական տեղեկատվություն օգտագործողների պահանջով: ԱԱԳԻ-ն Արմստատի ներքին նպատակներով կիրառվում է ազգային հաշիվներում որպես դեֆլատոր, ինչպես նաև արդյունաբերական արտադրանքի հաստատուն գներով ֆիզիկական ծավալի հաշվարկման համար: ԱԱԳԻ-ի ցուցանիշների խմբավորումներն ըստ անհրաժեշտության տրամադրվում են տեղեկատվության հիմնական օգտագործողների՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, հասարակական, գիտակրթական, ֆինանսական կազմակերպություններին, գործարար համայնքին, զանգվածային լրատվամիջոցներին, կենտրոնական բանկին, միջազգային կազմակերպություններին և դրա նկատմամբ պահանջարկ ունեցող այլ սուբյեկտներին՝ պահպանելով դրանց գաղտնիությանը վերագրվող օրենսդրական պահանջները:</p>
	1.2 Խորհրդակցում և կարիքների հաստատում	<p>ԱԱԳԻ-ի հաշվարկման մեթոդաբանության հետ կապված խորհրդատվություններ իրականացվել են ԱՄՀ-ի փորձագետների հետ: ԱԱԳԻ-ի հաշվարկման համար հիմք հանդիսացող «Արդյունաբերության ոլորտի</p>

		<p>կազմակերպությունների թողարկած արտադրանքի գների հաշվառման մասին» 1-Գին (արտադրանք) (ամսական) (այսուհետ՝ 1-Գին) վիճակագրական հաշվետվական ձևում հավաքվող ցուցանիշները վերանայվում են անհրաժեշտության դեպքում:</p>
<p>1.3 Արտադրանքի նպատակների սահմանում</p>		<p>Միջազգային չափորոշիչներին համապատասխանեցնելու նպատակով, ըստ անհրաժեշտության, կատարվում են ԱԱԳԻ-ի հաշվարկման մեթոդաբանական ուսումնասիրություններ և փոփոխություններ: Պարբերաբար ուսումնասիրվում է նաև վիճակագրական տեղեկատվության օգտագործողների կարծիքը՝ կապված Արմստատի հնգամյա և տարեկան վիճակագրական ծրագրերի հետ՝ ինչպես առաջարկվող նոր ցուցանիշների ընդգրկման, այնպես էլ առկա ցուցանիշների վերաբերյալ նրանց վերաբերմունքի, ակնկալիքների ու պահանջմունքների բացահայտման նպատակով: Վիճակագրական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության օգտագործողների կարծիքների ուսումնասիրությունն իրականացվում է ինչպես նրանց հետ աշխատանքային քննարկումների անցկացման միջոցով, այնպես էլ Արմստատի պաշտոնական կայքում առկա «Օգտագործողների բավարարվածության հետազոտության հարցաթերթի» միջոցով (տես՝ <a href="https://www.armstat.am/am/?nid=131">https://www.armstat.am/am/?nid=131</a> հղումը):</p>
<p>1.4 Հասկացությունների որոշում</p>		<p>ԱԱԳԻ-ի հաշվարկման հիմքում ընկած են հետևյալ հայեցակարգերը՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1. միջազգային չափորոշիչներին համապատասխան ԱԱԳԻ-ի հաշվարկման մեթոդաբանության ընտրություն,</li> <li>2. ՀՀ ողջ տարածքն ընդգրկող արդյունաբերական կազմակերպությունների գլխավոր համակցության և դրանց կողմից թողարկած արտադրատեսակների ընտրանք,</li> <li>3. ճյուղային ընդգրկունություն ըստ տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի (այսուհետ՝ ՏԳՏՀԴ խմբ. 2):</li> </ol>

		<p>ԱԱԳԻ-ի հիմնական օգտագործողներ են հանդիսանում Արմատատի արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրություն և մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների վիճակագրություն վարող կառուցվածքային ստորաբաժանումները: Մշակվող ռազմավարությունը հնարավորության սահմաններում հաշվի է առնում նաև այն բոլոր առաջարկություններն ու պահանջները, որոնք ներկայացվում են վերոհիշյալ ստորաբաժանումների կողմից:</p>
	<p>1.5 Տվյալների առկայության ստուգում</p>	<p>Այս վիճակագրական արտադրանքի համար տվյալները հավաքվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի և «Հնգամյա վիճակագրական ծրագրի» հիման վրա, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն և «Տարեկան վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» որոշումների հիման վրա: ԱԱԳԻ-ի տեղեկատվական բազան իր մեջ ընդգրկում է տվյալներ արդյունաբերական կազմակերպությունների կողմից թողարկած արտադրատեսակների քանակի և գնի մասին, ինչը հիմքն է հետագա հաշվարկների:</p>
	<p>1.6 Բիզնես մոդելի նախապատրաստում</p>	<p>Մինչ վիճակագրական հաշվետվական ձևի ընդունումը ՀՀ ՎՊԽ կողմից և ՀՀ արդարադատության նախարարության կողմից դրա պետական գրանցումը, որպես նորմատիվ իրավական ակտ, իրականացվում են դրանում ներառված ցուցանիշների և դրանց վերաբերյալ լրացման հրահանգների մասով աշխատանքային քննարկումներ տարբեր շահագրգիռ մարմինների, գիտական կազմակերպությունների, օգտագործողների հետ, իսկ հնարավորության դեպքում հաշվի է առնվում նաև միջազգային փորձագետների կարծիքը:</p>
<p>2. Նախագծում</p>		
	<p>2.1 Արդյունքների նախագծում</p>	<p>Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսի ձևավորման գործընթացի հիմնական փուլերն են՝</p> <ol style="list-style-type: none"> <li>1. արդյունաբերության ոլորտի կազմակերպությունների ընտրանք,</li> </ol>

		<p>2. «Արդյունաբերության ոլորտի կազմակերպությունների թողարկած արտադրանքի գների հաշվառման մասին» ձև թիվ 1-Գին (արտադրանք) (ամսական) վիճակագրական հաշվետվական ձևով հավաքված արտադրատեսակների ընտրանք,</p> <p>3. քանակային և գնային տեղեկատվության գրանցում և հավաքում,</p> <p>4. արտադրատեսակների ընտրանք գլխավոր համախմբից,</p> <p>5. ագրեգացման տարբեր մակարդակներում ցուցանիշների կշռման համակարգի ձևավորում,</p> <p>6. արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսի հաշվարկ,</p> <p>7. գների ինդեքսների հրապարակում:</p>
	<p>2.2 Փոփոխականների նկարագրությունների նախագծում</p>	<p>Արդյունաբերողների արտադրանքի գների վերաբերյալ ձև թիվ 1-Գին (արտադրանք) (ամսական) վիճակագրական հաշվետվական ձևի միջոցով ամսական պարբերականությամբ հավաքվող վիճակագրական տեղեկատվության համակարգը բաղկացած է երկու բաժնից՝</p> <p>Ա/ տեղեկատվական դաշտ գործունեության վերաբերյալ, ինչն ընդգրկում է.</p> <ul style="list-style-type: none"> <li>ա/ արտադրական գործունեությամբ զբաղվող իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի լրիվ անվանումը,</li> <li>բ/ փաստացի գործունեության հիմնական տեսակի անվանումն ու ծածկագիրը,</li> <li>գ/ հարկ վճարողի հաշվառման համարը,</li> <li>դ/ պետական ռեգիստրում գրանցման համարը,</li> <li>ե/ գործունեության իրականացման հիմնական վայրը (փոստային հասցեն), հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն,</li> </ul> <p>Բ/ արդյունաբերական կազմակերպության կողմից թողարկած արտադրատեսակի (ների) ցուցանիշների դաշտ, ինչն ընդգրկում է.</p> <ul style="list-style-type: none"> <li>ա/ արտադրված արտադրատեսակի անվանումը, մանրամասն բնութագիրը, չափի միավորը,</li> <li>բ/ ներքին և արտաքին շուկաներում իրացման տեսակը,</li> <li>գ/ հաշվետու ամսում արտադրված արտադրատեսակի փաստացի քանակը բնաիրային արտահայտությամբ,</li> <li>դ/ հաշվետու և նախորդ ամիսներում արտադրված արտադրատեսակի մեկ միավորի գինն առանց ավելացված արժեքի և սկզբիցային հարկերի,</li> </ul>

		ե/ նախորդ ամսվա նկատմամբ գնի զգալի փոփոխության դեպքում՝ գնի փոփոխության պատճառն ըստ ներկայացված ծածկագրերի:
2.3 Տվյալների հավաքման նախագծում		Վիճակագրական տեղեկատվության հավաքումն իրականացվում է ՀՀ վիճակագրության պետական խորհրդի կողմից 2019թ. նոյեմբերի 20-ի թիվ 46-Ն որոշմամբ հաստատված «Հաշվետվություն կազմակերպության արդյունաբերական արտադրանքի գնի մասին» ձև թիվ 1-Գին (արտադրանք) (ամսական) վիճակագրական հաշվետվության ձևի միջոցով ամսական պարբերականությամբ: Տեղեկատվության հավաքումն իրականացվում է վիճակագրական տեղեկություններ տրամադրողների կողմից հաշվետվական ձևի ինքնուրույն լրացմամբ և ըստ իրենց գործունեության գրանցման վայրի Ամստատի համապատասխան առանձնացված ստորաբաժանմանը թղթային, փաստային կամ էլեկտրոնային եղանակով ներկայացման միջոցով:
2.4 Գլխավոր համակցության և ընտրանքի նախագծում		Գլխավոր համակցության նախագծումն իրականացվում է Արմատատի արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության բաժնի կողմից վիճակագրական հետազոտությունների արդյունքում ստացված տվյալների հիման վրա, կազմակերպությունների թողարկած արտադրանքի մասին ամբողջական տեղեկատվության ապահովման նպատակով:
2.5 Մշակման և վերլուծության նախագծում		Վիճակագրական տեղեկատվության հավաքումից հետո վիճակագրական ցուցանիշները ենթարկվում են թվաբանական և տրամաբանական ստուգումների, որոնց հիման վրա անհրաժեշտության դեպքում տեղեկատվություն ներկայացնող կազմակերպության հետ իրականացվում են ճշգրտումներ:
2.6 Արտադրության համակարգերի և գործընթացի նախագծում		Վիճակագրական տեղեկատվության հավաքումից մինչև դրանց ամփոփումն իրականացվող բոլոր գործընթացների մասով կատարվում են նախապատրաստական աշխատանքներ, մասնավորապես կապված տեղեկատվություն տրամադրողներին համապատասխան իրազեկումներով ապահովելու, աշխատակիցներին անհրաժեշտ մասնագիտական դասընթացների միջոցով վերապատրաստելու և այլնի հետ:

3. Կառուցում		
	3.1 Հավաքման գործիքի կառուցում	Տեղեկատվության հավաքման իրականացման անհրաժեշտ վիճակագրական հաշվետվական ձևի և դրա լրացման հրահանգի հասանելիության ապահովման համար առկա են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային միջոցներ (տես՝ <a href="https://www.armstat.am/am/?nid=9">https://www.armstat.am/am/?nid=9</a> հղումը):
	3.2 Գործընթացի բաղադրիչների կառուցում կամ ամրապնդում	Տեղեկատվության ստուգաճշտման համար առկա են անհրաժեշտ մեթոդական ցուցումներ ու հրահանգներ: Մուտքագրման MS Office Excel աղյուսակներում և MS Office Access ծրագրային փաթեթում մշակվել են տվյալների թվաբանական ու տրամաբանական ստուգումների իրականացման համար անհրաժեշտ գործիքներ՝ հանրագումարների, տրամաբանական կապերի, ծածկագրերի համապատասխանության և այլ ավտոմատ ստուգումների համակարգեր:
	3.3 Տարածման բաղադրիչների կառուցում կամ ամրապնդում	Տեղեկատվության տարածման համար առկա են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային տարբերակներով տեղեկատվության հրապարակման հնարավորություններ՝ ամսական, եռամսյակային և տարեկան պարբերականությամբ:
	3.4 Գործընթացների կարգավորում	Վիճակագրական արտադրանքի ստացումը իրականացվում է հետևյալ փուլերով՝ 1. տեղեկատվության հավաքում, 2. տեղեկատվության մուտքագրում նախապես մշակված համակարգչային ծրագրի միջոցով, 3. մուտքագրված տեղեկատվության թվաբանական և տրամաբանական ստուգումներ, ճշգրտումներ, 4. վիճակագրական արտադրանքի վերջնական արդյունքի հաշվարկ, 5. տեղեկատվության տրամադրում կառուցվածքային ստորաբաժանումներին հետագա հաշվարկների համար, 6. վիճակագրական տեղեկատվության օգտագործողներին ամփոփ տեղեկատվության տրամադրում:
	3.5 Արտադրության համակարգի փորձարկում	Մեթոդաբանական փոփոխություններով պայմանավորված հավաքվող ցուցանիշների մասնակի փոփոխման պարագայում ծրագրային ապահովման փաթեթում ևս կատարվում է

		համապատասխան փոփոխություն, իրականացնելով ծրագրային ապահովման թեստավորում:
	3.6 Վիճակագրական բիզնես գործընթացի փորձարկում	Վիճակագրական հաշվետվական ձևում նոր ցուցանիշի ընդգրկմանը զուգահեռ իրականացվում է դաշտային փորձաքննություն և վիճակագրական տեղեկատվություն տրամադրողների կողմից վերջինիս ընկալման փորձարկում: Իրականացվում են համապատասխան փոփոխություններ դրանց լրացման հրահանգներում և մեթոդական ցուցումներում:
	3.7 Արտադրության համակարգի վերջնականացում	Վիճակագրական հաշվետվական ձևում առկա ցուցանիշների լրացման վերաբերյալ իրականացվում է մեթոդաբանական պարզաբանումների մշակում և տրամադրում վիճակագրական տեղեկատվություն ներկայացնողներին՝ միաժամանակ իրականացնելով շփումներ կազմակերպությունների համապատասխան մասնագետների հետ հեռախոսային կապի կամ էլեկտրոնային փոստի միջոցով: Վերջնականապես ամփոփվում են ցուցանիշների վերբերյալ վիճակագրական տեղեկատվություն տրամադրողների ու վիճակագրական արտադրանքը օգտագործողների կարծիքներն, առաջարկություններն ու մոտեցումները:
	<i>4. Հավաքում</i>	
	4.1 Գլխավոր համակցության և ընտրանքի ձևավորում	ՀՀ տարածքում արդյունաբերական գործունեություն ծավալող կազմակերպությունների գլխավոր համակցությունը ձևավորվում է Արմստատի արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության բաժնի կողմից վիճակագրական հետազոտությունների արդյունքում ստացված տվյալների հիման վրա: ԱԱԳԻ-ի ինդեքսի հաշվարկման համար բազային կազմակերպությունների ընտրանքը կատարվում է Արմստատի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի կողմից: Մասնակի դեպքերում հաշվի են առնվում նաև համապատասխան բաժինների և տարածքային վիճակագրական մարմինների կարծիքը, նրանց կողմից արված լրացուցիչ առաջարկությունները:

		<p>և անհրաժեշտության դեպքում որոշ արդյունաբերական կազմակերպություններ, որոնք բնութագրում և արտացոլում են տվյալ տարածքի արդյունաբերական ճյուղերի ամբողջությունն ու յուրահասկությունը ներգրավվում են ընտրանքում:</p>
	<p>4.2 Հավաքման կազմակերպում</p>	<p>Տեղեկատվության հավաքման կազմակերպումն իրականացվում է դիտարկման ենթակա ընտրանքային կարգով ընտրված բազային կազմակերպությունների քանակին համապատասխան 1-Գին (արտադրանք) (ամսական) վիճակագրական հաշվետվական ձևի և ըստ դրա լրացման հրահանգի տպագրության պատվերի ձևավորում, ինչպես նաև տպագրություն ու բաշխում համապատասխան կազմակերպությունների: 1-Գին (արտադրանք) (ամսական) վիճակագրական հաշվետվական ձևը և լրացման հրահանգը հասանելի են նաև Արմստատի պաշտոնական կայքում: Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների հավաքման համար առկա են ցանցային միջոցներ:</p>
	<p>4.3 Հավաքման իրականացում</p>	<p>Տեղեկատվության հավաքումն իրականացվում է ինչպես Արմստատի կենտրոնական ապարատի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման, այնպես էլ մարզային վարչությունների միջոցով՝ առձեռն, փոստի և էլեկտրոնային համակարգի միջոցներով համաձայն 20.06.2016թ. ՀՀ ՎՊԽ «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն որոշման: (տես՝ <a href="http://armstat.am/file/doc/99454498.pdf">http://armstat.am/file/doc/99454498.pdf</a> հղումը):</p>
	<p>4.4 Հավաքման վերջնականացում</p>	<p>Հավաքված տեղեկատվությունը մուտքագրվում է էլեկտրոնային միջավայր և ենթարկվում թվաբանական, տրամաբանական ստուգաճշտման: Տեղեկատվության մուտքագրումն իրականացվում է ինչպես մեխանիկական, այնպես էլ էլեկտրոնային միջավայր ներմուծելու եղանակով: Թղթային և էլեկտրոնային եղանակով ստացվող հաշվետվություններն էլեկտրոնային միջավայր տեղափոխելուց հետո ենթարկվում են արխիվացման՝ միաժամանակ պահպանելով դրանց գաղտնիությանը վերագրվող օրենսդրական պահանջները (տես՝ <a href="http://armstat.am/file/doc/99454478.pdf">http://armstat.am/file/doc/99454478.pdf</a> հղման IV կետը):</p>



5. Մշակում		
	5.1 Տվյալների ինտեգրում	ԱԱԳԻ-ի հաշվարկման համար, ամսական պարբերականությամբ, մեխանիկական եղանակով մուտքագրված, կազմակերպություններից և մարզային վարչություններից էլեկտրոնային տարբերակով ստացված տեղեկատվությունը միավորվում է մեկ միասնական տվյալների բազայում:
	5.2 Դասակարգում և կոդավորում	Արտադրանք-ներկայացուցիչների կշիռների նորացման (թարմացման) հետ միաժամանակ՝ 3-5 տարին մեկ անգամ իրականացվում է բազային կազմակերպությունների կողմից ներկայացրած արտադրատեսակների ծածկագրում (կոդավորում) ըստ ԱԴԳՏ (արտադրանքի դասակարգիչ ըստ գործունեության տեսակների) դասակարգչի:
	5.3 Վերանայում և հաստատում	Իրականացվում է թերի կամ աղավաղումներով ներկայացված տեղեկատվության ստուգաճշտում, ինչպես նաև ոչ ճիշտ ծածկագրված տեղեկատվության համապատասխանեցում գործող դասակարգիչների պահանջներին:
	5.4 Խմբագրում և իմպուտացիա	Ժամանակավոր բացակայող արտադրատեսակների գների հաշվարկման մեթոդը դա հաշվարկային գների օգտագործումն է մինչև փաստացի գների մասին տվյալների ի հայտ գալը, ինչը հնարավորություն է տալիս ապահովել ինդեքսների շարքերի անընդհատությունը հաշվարկման բոլոր մակարդակներում: Բացակա արտադրատեսակի գնի հաշվարկման համար օգտագործվում է համանման արտադրատեսակների գների միջին երկրաչափականի փոփոխությունը, իսկ ավելի բարձր մակարդակներում՝ գների միջին փոփոխությունների մեծությունները (գների ինդեքսները):
	5.5 Նոր փոփոխականների և միավորների ձևավորում	ԱԱԳԻ-ի հաշվարկն իրականացվում է մշակված գնային տեղեկատվության հիման վրա նոր փոփոխականների՝ գների ինդեքսների հաշվարկման ճանապարհով:
	5.6 Կշիռների հաշվարկում	Ագրեգացման տարբեր մակարդակներում ցուցանիշների կշռման համակարգը ձևավորվում է երկու փուլով: Առաջին փուլում օգտագործվում են արտադրանքների ծավալները ծածկագրված ըստ ԱԴԳՏ դասակարգչի, իսկ երկրորդ փուլում՝ արդյունաբերական

		արտադրանքի ծավալներն ըստ ՏԳՏՀ-ի ստորակարգության և որպես հանրագումար՝ ՀՀ ամբողջ արդյունաբերությունն աստիճանների:
	5.7 Ագրեգատների հաշվարկում	ԱԱԳԻ-ի հաշվարկն իրականացվում է Լասպեյրեսի բանաձևով, ամսական պարբերականությամբ, գների ինդեքսների ագրեգացման ճանապարհով ըստ ԱԴԳՏ և ՏԳՏՀ դասակարգիչների ստորակարգության աստիճանների:
	5.8 Տվյալների ֆայլերի վերջնականացում	ԱԱԳԻ-ի հաշվարկը համարվում է վերջնական, այն ենթարկվում է վերահաշվարկի միայն կազմակերպության կողմից գների հաշվարկման մեթոդաբանության փոփոխման մասին ներկայացրած գրության հիման վրա:
<b>6. Վերլուծություն</b>		
	6.1 Նախնական արդյունքների նախապատրաստում	ԱԱԳԻ-ում որակական տարբերության և սեզոնային տատանումների ճշգրտումներ չեն կատարվում:
	6.2 Արդյունքների վավերացում	Ցուցանիշների ստացման ողջ ընթացքում խստորեն պահպանվում են դրանց ստացման մեթոդաբանական պահանջները՝ համաձայն նախապես սահմանված դասակարգումների, մեթոդաբանական ուղեցույցների և վիճակագրական հաշվետվական ձևի լրացման հրահանգի:
	6.3 Արդյունքների մեկնաբանում և բացատրում	Ամփոփ ցուցանիշների ստացումից հետո իրականացվում է դրանց տրամաբանական վերլուծում՝ օգտագործելով նախորդ ամիսների վերաբերյալ համապատասխան ցուցանիշների դինամիկան:
	6.4 Բացահայտման հսկողության կիրառում	Խստորեն պահպանվում են ինչպես հրապարակման ենթակա, այնպես էլ վիճակագրական տեղեկատվության օգտագործողների կողմից հայցվող վիճակագրական ցուցանիշների գաղտնիությունը, այն է դրանց գերծ լինելը անհատական (անվանական) տեղեկություններից, համաձայն «Պաշտոնական վիճակագրության մասին օրենքի» և 2001 թվականի հունիսի 25-ի «Վիճակագրական գաղտնիքի պահպանման կարգը հաստատելու մասին» ՀՀ ՎՊԽ N 53 որոշման (տես՝ <a href="http://www.armstat.am/file/doc/99454478.pdf">http://www.armstat.am/file/doc/99454478.pdf</a> հղումը):
	6.5 Արդյունքների վերջնականացում	Մինչ մուտքագրված տեղեկատվության կիրառումն ըստ նպատակների իրականացվում

		են միննույն տնտեսվարող սուբյեկտների վերաբերյալ տարբեր աղբյուրներից ստացվող տեղեկատվության համեմատություններ, ինչի արդյունքում ստուգվում է տեղեկատվության արժանահավաստությունը:
7. Տարածում		
	7.1 Ելքային համակարգերի արդիականացում	Յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջում իրականացվում է արդյունաբերողների գների տեղեկատվական բազայի և հաշվարկային աղյուսակների արդիականացում, նախապատրաստում հաջորդ հաշվետու տարվան: Միաժամանակ տեղակատվության մուտքագրման աղյուսակներ տրամադրվում են Արմստատի մարզային վարչություններին:
	7.2 Տարածման արտադրանքների արտադրում	<p>Տարածվող արտադրանքների համար իրականացվում են արտադրման բոլոր քայլերը՝ բացատրական տեքստի, աղյուսակների, գծապատկերների և այլ նյութերի նախապատրաստում, այդ արտադրանքների խմբագրում և դրանց համապատասխանեցում հրապարակման ստանդարտներին:</p> <p>Վիճակագրական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է հայերեն, անգլերեն և/կամ ռուսերեն լեզուներով հրապարակվում է ներքոհիշյալ տարեգրքերի և վիճակագրական ժողովածուների միջոցով.</p> <p>«Հայաստանի վիճակագրական տարեգիրք» (հայերեն, ռուսերեն, անգլերեն),</p> <ol style="list-style-type: none"> <li>1. «Հայաստանը թվերով» վիճակագրական ժողովածու (հայերեն, անգլերեն),</li> <li>2. «Գները և գների ինդեքսները ՀՀ-ում» վիճակագրական ժողովածու (հայերեն, անգլերեն):</li> </ol> <p><u><i>Էլեկտրոնային տարբերակ</i></u></p> <p>Հրապարակումների էլեկտրոնային տարբերակները հասանելի են հայերեն (ամբողջական), ռուսերեն, անգլերեն, հետևյալ հասցեով. <a href="http://www.armstat.am/am/?nid=82">http://www.armstat.am/am/?nid=82:</a></p> <p>Ամսական և պատմական տվյալները հասանելի են հայերեն, անգլերեն լեզուներով, հետևյալ հասցեով.</p> <p><a href="https://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6&amp;rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6">https://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6&amp;rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6:</a></p>
	7.3 Տարածման արտադրանքների	Վիճակագրական տեղեկատվության տարածումը կատարվում է համապատասխան

	թողարկման կառավարում	Արմատատի հնգամյա և տարեկան վիճակագրական ծրագրերով նախատեսված ժամանակացույցի: Վիճակագրական տեղեկատվություն ներկայացնողների կողմից ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության փոփոխման կամ ճշգրտումներ կատարելու դեպքում համապատասխան փոփոխությունների և ճշգրտումների են ենթարկվում նաև Արմատատի կողմից արդեն իսկ հրապարակված ցուցանիշները:
	7.4 Տարածման արտադրանքների խթանում	Տարածման արտադրանքների տրամադրում: Գործիքների օգտագործում օգտագործողների հետ հաղորդակցությունը կառավարելու համար: Կայքի, ֆեյսբուքի և այլ միջոցների օգտագործում:
	7.5 Օգտագործողների աջակցության կառավարում	Օգտագործողների կողմից վիճակագրական չհրապարակվող ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության պաշտոնական հայցման դեպքում հնարավորության սահմաններում իրականացվում է լրացուցիչ ցուցանիշների հաշվարկ և տրամադրում նրանց՝ միաժամանակ պահպանելով վիճակագրական տեղեկատվության նկատմամբ գաղտնիության սկզբունքը:
<b>8. Գնահատում</b>		
	8.1 Գնահատման միջոցների հավաքում	Արդյունաբերողների գների վիճակագրության տվյալների բազայում ընդգրկված ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության արժանահավատության գնահատման միջոց է ծառայում արդյունաբերության վիճակագրությունից ստացվող տեղեկատվությունը:
	8.2 Գնահատման իրականացում	Արդյունաբերողների գների վիճակագրության ցուցանիշների գնահատումը որակի տեսանկյունից իրականացվում է 1-Գին հաշվետվական ձևի, ինչպես նաև Արմատատի արդյունաբերության և էներգետիկայի վիճակագրության կողմից հավաքվող ցուցանիշների հետ համադրման միջոցով:
	8.3 Գործողությունների ծրագրի համաձայնեցում	Համեմատվող միևնույն ցուցանիշի վերաբերյալ, տարբեր աղբյուրներից ստացվող տեղեկատվության միջև անհամապատասխանությունների հայտնաբերման դեպքում իրականացվում է դրանց հնարավոր պատճառների բացահայտում, որի հիման վրա իրականացվում են համապատասխան վերջնական ճշգրտման աշխատանքներ:

